Հանրապետական
Մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Միջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Աննա Անտոնյան

Ուսուցիչ՝ Գայանե Խաչիկյան

2023

Բովանդակություն

Ներածություն _____ էջ 3-6

Գլուխ 1 «Ինտեգրումը ուսումնական գործընթացում» _____ էջ 7-12

Գլուխ 2 «Փոխհարաբերությունները ուսումնական առարկաների միջև» __ էջ 13-15

Գլուխ 3 «Միջառարկայական կապերի օգտագործումը սեփական փորձառությամբ»_____ էջ 16-18

Եզրակացություն»_____ էջ 19

Գրականություն_____ էջ 20

Ներածություն

«Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով, նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում,այլ նաև ցույց տալ,թե ինչու դա այլ կերպ լինել չէր կարող:Չէ որ իմանալ որևէ բան, նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:

Յ.Ա.Կոմենսկի

Այսօր Հայաստանում, ինչպես և ողջ աշխարհում, տեղի են ունենում կրթական ոլորտի փոփոխություններ, որոնց նպատակն է կրթությունը մոտեցնել իրական կյանքին: Նոր պահանջներ են առաջադրվել կրթության կազմակերպման եղանակներին ու ձևերին, դրա բովանդակությանը: Փոխվել են կրթության նպատակը, խնդիրները, ուսուցչին ներկայացվող պահանջները: Ուսուցման գործընթացում անհրաժեշտաբար ներդրվում են ուսուցման նոր տեխնոլոգիաներ, մեթոդներ, որոնց միջոցով դպրոցը պետք է պատրաստ լինի պատասխանելու ժամանակի մարտահրավերներին: Հաճախ ենք ականատես լինում դեպքերի, երբ սովորողը զինված է կայուն գիտելիքներով, սակայն անհրաժեշտության դեպքում դժվարանում է դրանք կիրառել: Դրա պատճառներից մեկն այն է, որ դպրոցում սովորողի ստացած կրթությունը խաթարում է աշխարհի ամբողջականության վերաբերյալ իր պատկերացումները:

Դեռևս վաղ տարիքից են երեխաների մեջ ձևավորվում իրենց հատուկ պատկերացումներն աշխարհի մասին: Սակայն դպրոց ընդունվելով, փոխվում է այդ ամբողջական ընկալումը, և դրվում են սահմաններ՝ առարկաների տեսքով:Դպրոցում ձեռք բերած գիտելիքը շարունակում է մնալ որպես կտրտված տեղեկույթ՝ տարբեր ուսումնական առարկաների տեսքով, և սովորողը այդպես էլ չի կարողանում կրթական մյուս աստիճաններում դրանցից հավաքել ամբողջը: Փոխարենն ավելանում է գիտելիքի քանակական կողմը, որը հանգեցնում է մտային ավելորդ ծանրաբեռնվածության: Իսկ չէ՞որ կրթության նպատակն է պատրաստել լայն մտահորիզոնով քաղաքացու, որն օժտված լինի յուրացված գիտելիքները համակարգելու և, ըստ անհրաժեշտության, դրանք կիրառելու կարողությամբ: Դպրոցում երեխան պետք է ունենա համակարգված և ամբողջական ընկալում բնության և դրա երևույթների վերաբերյալ: Անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթը քննի տարբեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Շարունակ փոխում է գործունեության ոլորտը, որն էլ հետաքրքիր է դարձնում աշխատանքը: Առարկաների միջև կապերն ավելի ու ավելի են սերտանում, լրացնում միմյանց ու նպաստում երևույթի բազմակողմանի (տարբեր առարկաների տեսքով)

դիտարկմանը և ընկալմանը:Գիտելիքների միավորումը և համադրումը տեղի են ունենում տարբեր եղանակներով: Այն դեպքում, երբ կապեր են ստեղծվում տարբեր ուսումնական առարկաներին վերաբերող գիտելիքների միջև, ընդունված է անվանել միջառարկայական կապեր:

- Միջառարկայական կապերին դիմելը Կոմենսկին համարում էր «գիտություններից մեծ հարստություններ ձեռք բերելու» լավագույն միջոց և գտնում էր, որ «Այն ամենը, ինչը փոխադարձաբար կապված է, նույնպիսի կապի մեջ էլ պիտի դասավանդվի»:
- Ի.Հ.Պեստալոցին լուրջ վտանգ էր տեսնում առարկաները «տարանջատելու» մեջ:
- Ռուս ականավոր մանկավարժ Կ.Դ.Ուշինսկին միջառարկայական կապերի ստեղծումն ու կենսագործումը համարում էր արդյունավետ ուսուցման կարևորագույն նախապայմաններից մեկը:
- Փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուն առաջ քաշեց ուսումնական ծրագրերի կառուցման նոր սկզբունք, համալիր թեմաներ, այսինքն՝ տարբեր բնագավառների, տարբեր երևույթների միջև գոյություն ունեցող իրական կապերը հասկանալու, ընդլայնում է դպրոցականի մտահորիզոնը և ձևավորում հնարավորին չափով ամբողջական աշխարհայացք:

Միջառարկայական կապերը նպաստում են տարբեր ուսումնական թեմաների (կամ գիտելիքների) միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, իսկ ներառարկայական և ներդասընթացային կապերը նման դեր են կատարում տվյալ առարկայի ներսում: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ նոր նյութն ուսումնասիրելու ժամանակ ուսուցիչն օգտագործում է աշակերտների այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել նախորդ դասարանում և տրամաբանորեն կապվում են նոր գիտելիքների հետ, նպաստում դրանց յուրացմանը:

Միջառարկայական կապերի նպատակային օգտագործումը պետք է.

- պարտադիր լինի բոլոր ուսուցիչների համար,
- լինի միայն ուսումնական նպատակին հասնելու միջոց,
- գործադրվի միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կա,
- ինքնանպատակ չլինի,
- զուգակցված լինի ուսուցման դասական ձևերի հետ,
- դասի հիմնական նպատակից չշեղի աշակերտների ուշադրությունը:

Սակայն միջառարկայական և ներառարկայական կապերի օգտագործումը ենթադրում է ուսուցչի պատրաստություն ոչ միայն գիտելիքների հաղորդման եղանակների, այլև հնարավոր ուղիների մասին: Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծվում են տարբեր եղանակներով: Օրինակ՝ ուսուցիչը դասի ընթացքում նոր նյութը պատմելիս կամ բացատրելիս աշակերտներին հիշեցնում կամ հարցնում է, թե մյուս առարկաներից իրենք ինչ գիտեն տվյալ երևույթի վերաբերյալ: Ուսուցիչը, հիմնվելով աշակերտներին հայտնի գիտելիքների վրա, աշխատում է նոր նյութը կամ գիտելիքները հասկանալի դարձնել, ստեղծել ուսումնասիրվող երևույթի համակողմանի, ամբողջական պատկերացում: Ուսումնական առարկաների փոխադարձ կապերի ապահովումը հրատապ խնդիր է: Հասկանալի է, առանց այդպիսի կապերի ապահովման, սովորողների գիտելիքները կլինեին անբավարար, իսկ դասավանդման հարցերն առանձնապես ոչինչ չէին ավելացնի ուսուցման արդյունավետությանը: Միջառարկայական կապերն ամենևին էլ չեն սահմանափակվում միայն նշված առարկաներով: Այդպիսի կապերը գոյություն ունեն համարյա բոլոր դպրոցական դասընթացներում: Չէ՞ որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթները և

փաստերը կարող են ընկալվել ու ուսումնասիրվել միայն միմյանց և այլ երևույթների հետ փոխադարձ կապի և փոխգործողության մեջ: Միջառարկայական կապերը լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր թեմա ուսումնասիրվի բոլոր կողմերից, տարբեր կապերի բացահայտման տեսանկյունով: Այսպես կարող է իրականանալ ուսուցման ինտեգրումը:

Հետազոտությաննպատակն է՝
Ուսումնասիրել և ցույց տալ,որ միջառարկայական կապերի ստեղծումը նպաստում է գրականության դասավանդման գործընթացում ուսումնական նյութի հեշտ յուրացմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը,անձի զարգացմանը:

Հետազոտությանհարց
Ինչպե՞ս են միջառարկայական կապերը նպաստում սովորողների կրթական առաջադիմությանը**:**

Հետազոտությանխնդիրներնեն՝
.Ուսուցանվող նյութը դարձնել հասկանալի և մատչելի՝ կապելով այլ առարկաների հետ:

.Միավորել միջին դպրոցում դասավանդվող առարկաները' օգտագործելով ուսումնական առարկաների միջև փոխհարաբերությունները, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել ուսումնասիրվող երևույթների, գործողությունների, գործընթացների մասին:

.Միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ,ամրապնդել ու կիրառել

.Միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով անցածի ու անցնելիքի միջև ստեղծել տրամաբանական կապ:

Թեմայի արդիականությունը
Տարիների հետ զարգանում է սովորողի,ավագ դպրոցականի քննադատական մտածողությունը:Այս ամենը նպաստում է տեսական մտածողության ձևավորմանը, շրջապատող աշխարհի,բնության օրենքների և հասարակության զարգացման ընդհանուր օրինաչափությանը,հասկանալու ունակությունների կատարելագործմանը:Ինչպես ցույց է տալիս փորձը,դպրոցական դասընթացում միջառարկայական կապերի հաստատումը նպաստում է սովորողների՝ աշխարհի մասին համալիր պատկերացումների ու պատկերների ամբողջացմանը: Միջառարկայական կապերը կարևոր դեր են խաղում սովորողների գիտական աշխարհայացքի ու գործնական մոտեցումների ձևավորման համար և նպաստում են նրանց հետաքրքրվածությունը մեծացնելու ճանաչողական բազմաբնույթ գործունեության մեջ ընդգրկվելու,գիտելիքներն ընդհանրացնելու կարևոր գործին:Միջառարկայական կապերի լայն,բազմակողմանի օգտագործման արդյունքում ոչ միայն որակապես նոր մակարդակի վրա են լուծվում սովորողների ուսուցման,զարգացման և դաստիարակության խնդիրները,այլև նրանց մոտ

իրականության բարդ խնդիրները համալիր տեսնելու,իրական լուծումներ և մոտեցում գտնելու հիմք է դրվում:

Ես ևս իմ մանկաարժական պրակտիկայում առանձնահատուկ ուշադրություն եմ դարձնում միջառարկայական կապերի ապահովմանը՝ այն դարձնելով առաջնային, իսկ ինտեգրված ուսուցումը՝ որպես ժամանակակից դասավանդման մեթոդ, նախատեսում է միջառարկայական կապերի զարգացում և խորացում:Ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս հասկանալ բնության մեջ տեղի ունեցող երևույթների էությունը:Ինտեգրացիան թույլ է տալիս ձևավորել կրեատիվ մտածողությամբ օժտված աշակերտներ :Հենց այսպիսի դասերի ժամանակ են ձևավորվում ստեղծագործ, ինքնուրույն, պատասխանատու անհատներ:
Ինտեգրված ուսուցումը առաջացնում է հետաքրքրություն առարկայի հանդեպ, տալիս է ինքնավստահություն, աշակերտներին օգնում գիտակցաբար յուրացել սովորածը:

Գլուխ 1

Ինտեգրումը ուսումնական գործընթացում

Ուսումնական ծրագրի ինտեգրման մասին գաղափարը ձևավորվել է դեռևս 1800-ական թվականների վերջին:
Ինտեգրված դասերի առաջացմանը և զարգացմանը անդրադարձ է կատարվել «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ» ձեռնարկում: Այստեղ նշվում է, որ ինտեգրված դասերի հեղինակը գերմանացի փիլիսոփա և մանկավարժ Յոհան Ֆրիդրիխ Հերբարտն էր, նրան հաջորդել են Ջոն Դյուին, Ջեյմս Բինը (Դավթյան 2007: 58):
Շարունակելով և զարգացնելով Հերբարտի տեսությունը՝ նրա հետևորդները սկիզբ դրեցին մի շարժման, որը մանկավարժության մտքի պատմության մեջ հայտնի է «հերբարտականների շարժում» անունով: Հերբարտն առաջինն էր, ով հանդես եկավ ուսումնական առանձին առարկաները որոշակի թեմաների շուրջ միավորելու առաջարկով, և այդ երևույթն անվանեց «գիտությունների ինտեգրում»:1920-ական թվականներին այդ առաջադիմական շարժումը ղեկավարում էր Ջոն Դյուին:Նա գտնում էր, որ բոլոր գիտությունները սկիզբ են առնում «մեր միակ մոլորակի և մեր ապրած միակ կյանքի պահանջներից: Միամտություն է կարծել, թե երկրագունդը կազմված է տարբեր բնույթներ ունեցող առանձին շերտերից՝ մաթեմատիկական, ֆիզիկական,պատմական և այլն:
Ջոն Դյուին և նրա կողմնակիցները կրթակարգի հիմքում դնում էին աշակերտների անձնական և հասարակական հետաքրքրությունները և առաջ էին քաշում «ինտեգրված կրթակարգի»՝ այսպես կոչված, նախագծային մոտեցումը: Հետագա տասնամյակների ընթացքում ուսումնական ծրագրի ինտեգրման մասին գաղափարներն ու մոտեցումները նոր ուղղվածություն կստանան: 1930-ական թվականներին երևան եկավ արմատական կրթակարգի շարժումը, իսկ 1940-50-ական թվականներին արդեն ձևավորվեցին պրոբլեմային ուսուցման ծրագրերը: Ուսումնական ծրագրի ինտեգրման մեկ այլ ջատագով Ջեյմս Բինը գտնում է, որ «Ուսումնական ծրագրի ինտեգրումը պարզապես տարբեր առարկաների դասերի պլանի վերադասավորում կամ մակերեսային վերափոխումներ պահանջող կազմակերպչական միջոց չէ: Այն դպրոցի գոյության նպատակի մասին խորհելու ձև է, ըստ որի՝ ուսումնական ծրագրի աղբյուրները պետք է լինեն կյանքի առաջադրած խնդիրները, հարցերն ու անհանգստացնող իրողությունները»:

Ժամանակակից կրթության մեջ ինտեգրացիան հիմնականում դիտարկվում է որպես տարբեր ուսումնական առարկաների միջև գոյություն ունեցող կապերի առկայություն: Բացի դրանից՝ ինտեգրացիան պայմանավորված է ուսուցման կազմակերպչական, հայեցակարգային և մեթոդական մի շարք մոտեցումներով և առանձնահատկություններով: Դրանցից հիմնականները՝

1. Ինտեգրացիան հնարավորություն է տալիս ձևավորելու աշխարհի բոլոր երևույթների և օբյեկտների փոխկապակցության մասին ամբողջական պատկերացումներ,
2. Ինտեգրացիան թույլ է տալիս միավորել տարբեր ուսումնական առարկաների

հնարավորությունները՝ ձևավորելով սովորողի գլխավոր գործունեությունը և այդ խնդիրների լուծման ընթացքում ապահովելով յուրաքանչյուրի ներդրումը,

3. Ինտեգրացիան ապահովում է շրջակա աշխարհի մասին ստացված գիտելիքների միջև եղած կապերի բացահայտումը և դպրոցականի կոնկրետ պրակտիկ գործունեությունը:

Ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով այսօր արդիական է բոլոր դասարաններում ուսուցման և դաստիարակության ինտեգրման խնդիրը:Դա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից կրթական համակարգը նպատակ ունի ձևավորելու բազմակողմանի զարգացած անձ աշխարհի ամբողջական պատկերի ընկալմամբ, երևույթների և նրանց միջև եղած կապերի բացահայտմամբ:

ՈՒսուցման գործընթացում ինտեգրումը կարելի է հասկանալ երկու իմաստով. առաջին՝ սովորողների մեջ շրջակա աշխարհի վերաբերյալ ամբողջական պատկերացումների ձևավորում /ինտեգրումը դիտարկվում է որպես ուսուցման նպատակ. երկրորդ՝ առարկայական գիտելիքները մերձեցման հիմք /ինտեգրումը դիտարկվում է որպես ուսուցման մրջոց /:

Ինտեգրումը իրականացվում է մի քանի ուղղություններով և մակարդակներով՝ ներառարկայական և միջառարկայական:

ՈՒսուցման արդյունավետությունը մի շարք հատկանիշներից և անջատ-անջատ օժանդակ տարրերից չի բաղադրվում, այն ենթադրում է մի ամբողջական արդյունավետ համակարգ,որն իր մեջ ներառում է մարդկանց, կառույցներ, փոխհարաբերություններ, գաղափարախոսական նպատակներ,իմացական նյութ, շարժառիթներ և ցանկություն:

Գիտելիքներից բացի սովորողին անհրաժեշտ է տալ նաև դրանք կիրառելու իրական կարողություններ, հմտություններ, ռազմավարություն՝ ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ, ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները:

Այսպիսով, ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ինչ գիտի և ինչ կարող է անել աշակերտը: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները.

-ուսումնառության ընթացքում աշակերտը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործող մասնակցի.

- ուսուցիչը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից և դառնում է այդ գործընթացը կազմակերպող, խորհրդատու,գործընկեր՝ աշակերտի հետ մասնակցելով որոնողական աշխատանքներին:

Ինտեգրված ուսուցումը կիրառելի է հանրակրթության բոլոր աստաճաններում: Բոլոր դասարաններում ինտեգրված ուսուցման կազմակերպումն ունի իր առանձնահատկությունները, որոնք էլ որոշում են այդ գործընթացի մարտավարությունը: Դրանք առաջին հերթին պայմանավորված են այդ երեխաների տարիքահոգեբանական առանձնահատկություններով:Սովորաբար ուսուցիչները դժվարանում են ինտեգրված բովանդակությունը հասկանալի ու հետաքրքիր ներկայացնել սովորողներին: Կան նաև այնպիսի գործոններ, որոնք հեշտացնում են այդ դժվարությունների հաղթահարումը: Բարենպաստ գործոն է նաև այն, որ ինտեգրումը սովորողին իր մտավոր ներուժը զարգացնելու մեծ հնարավորություն է ընձեռում:

Ինտեգրված դասերի կազմակերպումն ու անցկացումը դպրոցում կրթության բարեփոխման ու կատարելագործման նոր ուղղություններից մեկն է:Ինտեգրված դասի կառուցվածքը սովորական դասից տարբերվում է հետևյալ առանձնահատկություններով՝

-հստակությամբ, ուսումնական նյութի սեղմությամբ,

-տրամաբանական փոխպայմանավորվածությամբ,

-ուսումնական նյութի տեղեկատվական մեծ տարողությամբ:

Նման դասերի պլանավորման համար ուսուցիչը նկատի է ունենալու հետևյալ պայմանները.

*Ինտեգրված դասին գիտելիքներ են հաղորդվում տարբեր առարկաներից:

Այստեղից էլ պետք է որոշել ինտեգրված դասի գլխավոր նպատակը:

- Եթե որոշված է ընդհանուր նպատակը, ապա առարկաների բովանդակությունից ընտրվում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են դրա իրականացման համար:

Ինտեգրված դասի պլանավորման ժամանակ պետք է հստակ ընտրել դասի տեսակը, կառուցվածքը,ուսուցման մեթոդները,ինչպես նաև որոշել սովորողների ծանրաբեռնվածությունը՝ գործունեության տարբեր ձևերով:

Աշխատանքում կարևորելով ինտեգրված թեմատիկ միավորի նշանակությունը, նշվում է, որ այն՝ զարգացնում է ուսուցչի ստեղծագործական կարողությունները,

- Զարգացնում է ուսուցիչների տեսական և գործնական հմտությունները,

ձևավորում և զարգացնում է ուսուցիչների ստեղծագործական խմբերը,

- զարգացնում է ուսուցիչ-աշակերտ համագործակցային խմբերի աշխատանքը,
- պլանավորում,կազմակերպում և իրականացնում է աշակերտների բազմապիսի արտադասարանական – դաստիարակչական աշխատանքների ծրագրերը,
- աշակերտների կարողություններին համապատասխան կազմակերպում է ուսուցումը:

Հանրապետության հանրակրթական դպրոցներում լիարժեք ինտեգրման ուսուցման անցնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- Ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսների ստեղծում / գրադարանային ֆոնդ, համակարգչային կենտրոն և այլն/,
- Ժամանակակից պահանջներից բխող բարձր որակավորում ունեցող ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում, համագործակցային ուսուցման ճիշտ կազմակերպում,
- Դիդակտիկ նյութերի ապահովում,
- Ուսումնական գործընթացի օպտիմալ կառուցվածքի ձևավորում:

Միջառարկայական համակարգի իրականացման համար հնարավոր է երկու մոտեցում՝

1. Թեմատիկ՝ միջառարկայական իմացական խնդիրների, պրոբլեմային հարցերի, առաջադրանքների կատարման համար ուղղորդող մտքերի օգտագործում:
2. Ընդարձակ պրոբլեմային՝ տարբեր ուսումնական առարկաների համար ընդհանուր միջառարկայական հիմնահարցերի առաջադրում և դրանց ընթացիկ լուծում:

Կրթության բովանդակությունն առանձին առարկաներից պատրաստի գիտելիքների ամբողջություն չէ, այդպիսի ընկալումը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին և աշխարհի մասին մասնատված, ոչ ամբողջական պատկերացում է տալիս: Այս խնդրի հնարավոր լուծումներից մեկը ինտեգրված, միասնական ուսումնական և թեմատիկ ծրագրերի, դասընթացների և պլանների ստեղծումն է :

Միավորված ծրագրերը բնութագրվում են գիտության, տեխնիկայի, արվեստի տարբեր ոլորտներից գիտելիքների փոխներթափանցմամբ:Միավորման /ինտեգրացիայի/ հիմք կարող է լինել.

. բովանդակությունը /թեման, հասկացությունը,առանցքը/

.գործողություններն ու հմտությունները

.վերոնշյալ երկուսը միասին /ամբողջական/

Միավորված ծրագրերը կառուցվում են այնպես, որ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մի այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա:Այս մոտեցումը

ենթադրում է տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում, ինչպես նաև դրանց գնահատում, որը խթանում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեությունը: Այս մոտեցման հիմնական, վճռորոշ գործոնն այն է, որ ուսումնական առարկաները տարանջատված չեն միմյանցից, այլ սերտորեն փոխկապակցված են թեմայով: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են ինտեգրված ուսումնական ծրագրերի հետևյալ տեսակները.

. միջառարկայական

. բազմառարկայական

. անդրառարկայական

Որպես միավորող առանցք հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընդգրկում է մի քանի առարկա:
Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միվորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը,ապա ինտեգրման համար առանձնացվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները:Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար; Որպեսզի ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է .

1. Ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,
2. Համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,
3. Ինտեգրման ձևը,

4. Միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,
5. Նյութի հաջորդականության կառուցվածքը,
6. Նյութի ներկայացման միջոցները,
7. Դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,
8. Տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Այսպիսով,ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ,շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը /հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա/, կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը: Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասը արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է:

Գլուխ 2
Փոխհարաբերությունները ուսումնական առարկաների միջև

Միջին դպրոցականի կրթության որակի, ուսումնառության մակարդակի բարելավման եղանակների որոնումը նպատակահարմար է իրականացնել ինտեգրված միջառարկայական կապերի զարգացման ոլորտում:Ժամանակակից կյանքի պայմաններում ուսուցիչը կրթական գործընթացում ստացել է ստեղծագործական լայն հնարավորություններ, մեթոդների, ուսուցման հնարների ակտիվ որոնման ազատություն: Կրթության բարեփոխումների առաջնային խնդիրներից մեկը սովորողների իմացական ակտիվության ու շահագրգռվածության բարձր մակարդակի ապահովումն է:

Միջառարկայական կապերի հաստատման նպատակն է ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ այն նպաստի բնության օրենքների մասին սովորողների գիտական պատկերացումներն ամբողջական համակարգի մեջ տեսնելու կարողությունների ձևավորման մեջ: Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս ստեղծել միասնական, ինտեգրված դասեր, որոնց ժամանակ երեխաներն աշխատում են հեշտությամբ և հետաքրքրությամբ՝ արդյունքում յուրացնելով մեծ ծավալով օգտակար նյութեր, ձեռք բերելով գիտակցված գիտելիքներ և ձևավորելով համադրելու, ընդհանրացնելու կարողություններ: Կարևոր է նաև այն, որ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կիրառվում են դպրոցականների կողմից իրենց գործունեության մեջ ոչ միայն ստանդարտ ուսումնական իրավիճակներում, այլև անծանոթ իրավիճակում ստեղծագործական դրսևորումների, գործնական գիտելիքի, մտավոր ունակությունների դրսևորման ժամանակ: Դպրոցական պրակտիկայից հայտնի է, որ այն հարցերը, որոնք պահանջում են անսովոր կողմից որևէ բան դիտարկել, հաճախ երեխաներին փակուղու մեջ են դնում, և դա հասկանալի է, քանի որ նրանց դա չեն սովորեցրել: Իհարկե, ինչ-որ բան նորովի տեսնելը, և ոչ այնպես, ինչպես նախկինում տեսել ես, հեշտ խնդիր չէ: Բայց դա կարելի է սովորել այն դեպքում, երբ ուսուցման գործընթացը կազմակերպվում է սովորողների ինքնուրույն գործունեությունը, ստեղծագործական ունակությունները խթանելու, զարգացնելու բազմատեսակ հնարավորություններ ստեղծելու միջոցով: Միջին դպրոցականների ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի հաստատման համակարգված մոտեցման ներդրումը կարող է ավելի մեծ չափով, քան ավանդական առարկայական ուսուցումը, նպաստել լայն խորագիտակ մարդու զարգացմանը, որն ունի ամբողջական աշխարհայացք, իր ունեցած գիտելիքներն ինքնուրույն համակարգելու ունակություն և տարբեր խնդիրների լուծման համար

կարող է ցուցաբերել ոչ ավանդական մոտեցում:Միջառարկայական կապերը կարող են օգնել աշակերտներին հասկանալ շրջապատող աշխարհը, նրա հատկությունները, հիմնական երևույթները, այնտեղ ընթացող գործընթացները և այն օրինաչափությունները, որոնց դրանք ենթարկվում են:

Այսպիսով, դպրոցական առարկաների փոխադարձ կապակցվածությունը սովորողներին համոզում է, որ գիտելիքների տարբեր ճյուղերի միջև չկան կտրուկ սահմաններ, որ գիտության տարբեր ոլորտները միմյանցից կտրված չեն, այլ փոխադարձաբար կապված են միմյանց հետ: Սովորողները գիտակցում են իր բովանդակությամբ այն խորը փաստը, որ բոլոր գիտություններն իրականում տարբեր կողմերից և յուրաքանչյուրն իր մեթոդներով ուսումնասիրում է նյութական աշխարհը: Իրենց ամբողջության մեջ նրանք ընդհանուր պատկերացում են տալիս բնության մասին:
Սովորողները մեծանում են, հարստանում իրենց փորձով. նրանք գիտակցում են, որ կանգնած են ինքնուրույն կյանքի շեմին: Աճում է նրանց գիտակցված վերաբերմունքն ուսման նկատմամբ: Ուսուցումը դառնում է կյանքի անմիջական իմաստ: Ուսումնական առարկաների նկատմամբ վերաբերմունքն ընտրողական բնույթ է կրում:Այսպիսով, միջառարկայական ինտեգրման հաճախ կիրառվող տարբերակներից մեկը կարող է դառնալ ՏՀՏ-ի, ինֆորմատիկայի ինտեգրումն այլ ուսումնական առարկաների հետ, որը գրեթե բոլոր ուսումնական առարկաների համար կարող է ծառայել որպես կապող օղակ: Այն կլինի դպրոցական կրթության հնարավորությունների ընդլայնման, մանկավարժի մեթոդական հարստացման և ուսուցման որակի բարձրացման միջոց: Բայց ինտեգրման հիմնական նպատակը դպրոցականի մոտ շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացում ստեղծելն է, այսինքն՝ սովորողի աշխարհայացքի ձևավորումը: Բազմակողմանի միջառարկայական կապերի միջոցով ոչ միայն որակապես նոր մակարդակում լուծվում են սովորողների ուսուցման, զարգացման և դաստիարակության խնդիրները, այլև հիմք է դրվում իրական բարդ խնդիրների լուծման համապարփակ տեսլականի և մոտեցման համար:Դա է պատճառը, որ միջառարկայական կապերը ուսուցման և դաստիարակության համապարփակ մոտեցման համար կարևոր պայման և արդյունք է:Հումանիտար ուղղվածությամբ դպրոցականների մոտ տարբեր լեզուների դասերի ժամանակ միջառարկայական կապերն արտահայտվում են խոսքի զարգացման համար այս կամ այն առարկայի միջառարկայական նյութի օգտագործման, գրական ամենօրյա լեզվի և գիտության լեզվի ընդհանրությունները բացահայտելու համար: Խոսքը հարստացնում են պատկերներով, ցույց են տալիս բանաստեղծական խոսքի և երաժշտական հնչողության ընդհանրությունը և այլն: Սովորաբար ասում են, որ լեզուն կապված է դպրոցական բոլոր առարկաների հետ, «քանի որ լեզուն բոլոր առարկաների համար արտահայտվելու, հաղորդակցվելու, գիտելիքը փոխանցելու անհրաժեշտ միջոց է»: Նման կապի առկայությունն անվիճելի է: «Հայոց լեզու ուսումնական առարկաներ» շղթայում այս կապը սահմանվում է ոչ այնքան հայոց լեզվի, որքան մյուս բոլոր առարկաների համար, քանի որ լեզուն, որպես գիտելիքների գործիք, ցանկացած առարկայի վերաբերյալ սովորողների գիտելիքների յուրացման վճռորոշ պայմաններից մեկն է: Դպրոցում մայրենի և օտար լեզուների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու համար այլ մեթոդական հարցերի հետ մեկտեղ զգալի դեր է

հատկացվում նաև միջառարկայական կապերին: Միջառարկայական հիմունքներով լեզվի դասերը թույլ են տալիս լուծել հետևյալ խնդիրները.
• միավորել ավագ դպրոցում սովորող առարկաները' օգտագործելով ուսումնական առարկաների միջև փոխհարաբերությունները, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել ուսումնասիրվող երևույթների, գործողությունների,գործընթացներիմասին;
• սովորողներին զինել ճիշտ ուղղագրությամբ գրելու, բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու հմտություններով;

• ուսումնական գործունեության տեսակների կանոնավոր ռացիոնալ հերթափոխման հաշվին ավագ դպրոցականների համար ստեղծել պայմաններ սթրեսներից խուսափելու, հոգեկան առողջության պահպանման համար; 15
• զարգացնել արդյունավետ հաղորդակցման, կենսական փորձ ձեռք բերելու հմտությունները, ընդլայնել անձի սոցիալական տարածքը

Միջառարկայական կապերը նպաստում են սովորողների ստեղծագործական, տրամաբանական և քննադատական մտածողության զարգացմանը, թույլ են տալիս նրանց կիրառել ստացած գիտելիքները իրական պայմաններում:Այսպիսով , անցածի և անցնելիքի միջև ստեղծվում է տրամաբանական կապ:

Գլուխ 3
Միջառարկայական կապերի օգտագործումը սեփական փորձառությամբ

Լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել:
Հայկական ժողովրդական ասացվածք

Միջնակարգ կրթության համակարգում մայրենի լեզուն առաձնահատուկ տեղ ունի անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, վերլուծական և պատկերավոր մտածողության զարգացման, ինչպես նաև մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման համար: Լեզվի ուսուցման հիմքում տեսականն ու գործնականը պետք է սերտ շաղկապված լինեն, որպեսզի տեսական նյութի յուրացումը անպայմանորեն կատարվի գործնական աշխատանքի միջոցով:
Շատ կարևոր է մայրենիի ուսուցումը կապել տարբեր առարկաների հետ և հարստացնել աշակերտների հանրակրթական գիտելիքները:
Մայրենի, հայոց լեզու, գրականություն, առարկաները այն առարկաներից են, որոնք ներծծված են միջառարկայական կապերով:Միջառարկայական կապերի ստեղծումը մայրենիի, հայոց լեզվի, գրականության դասժամերին, ապահովում է աշակերտների բազմակողմանի զարգացում: Հաղորդվող նյութը դառնում է հետաքրքիր, դասաժամը միօրինակ ու ձանձրալի չի անցնում :

Ինձ համար կարևոր է ճիշտ որոշել,թե որ դասի ժամանակ կարելի է կազմակերպել ինտեգրված դասեր և որտեղ կարող եմ ապահովել միջառարկայան կապեր: Միջառարկայական կապերի կիրառումը շատ նպատակահարմար էր 5-րդ դասարանի մայրենիի «Մեսրոպ Մաշտոցը և հայերենի տառերի ծնունդը» դասում,որը կներկայացնեմ ստորև:

Միջառարկայական կապերի ապահովումը «Մայրենի», «Հայոց Լեզու», «Գրականություն» դասերին

Մայրենի-հայոց պատմություն-աշխարհագրություն-ՏՀՏ-մաթեմատիկա միջառարկայական կապը երևում է 5-րդ դասարանի «Մեսրոպ Մաշտոցը և հայերենի տառերի ծնունդը» դասում:

1.Հավաքագրել տեղեկություններ հայոց պատմությունից

Երեխաներին հնարավորություն տրվեց դասը կապել հայոց պատմության հետ,տեղեկություններ ստացան 5-րդ դարում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններից:Վռամշապուհ թագավորի և Սահակ Պարթևի՝ կաթողիկոսի՝ որպես երկրի գլխավոր դեմքերի մասին գիտելիքները ամրապնդեցին:

2.Հավաքագրել տեղեկություններ աշխարհագրությունից

Աշխարհը ճանաչելը յուրաքանչյուր մարդու պարտականությունն ու երազանքն է, աշխարհն ու աշխարհի մասին եղած գիտելիքները երեխաների համար ոչ միայն շատ մատչելի են, այլև գրավիչ ու հետաքրքրող:Աշխարհը և միջավայրը ճանաչելը շատ կարևոր է աշակերտի աշխարհայացքի ձևավորման գործում:Աշակերտները տեղեկություններ հավաքեցին հնագույն քաղաքներից՝ Եդեսիայից և Սամոսատից:Ուսումնասիրություններից ոգևորված՝ աշակերտները հետաքրքրվեցին նաև Օշականով,որտեղ թաղված է Մեսրոպ Մաշտոցը:

3.Մայրենի-ՏՀՏ միջառարկայական կապը

Այսօր դժվար է իրականացնել ուսուցումը առանց ՏՀՏ միջոցների:Այն դարձել է մեր օրերի անբաժան մասը:
Օշականի և նրա գտնվելու վայրի մասին հանձնարարվել էր հավաքագրել տեղեկություններ ինտերնետ հարթակից:Տեղեկությունը ինքնուրույն փնտրելու և գտնելու կարողությունը ոգևորում է աշակերտներին:Բարձրացնում է նրանց հետաքրքրասիրությունը և ակտիվությունը:

Մայրենի-մաթեմատիկա միջառարկայական կապ

Մեսրոպյան տառերի շարքը ուսուցանելիս շատ կարևոր է,որ աշակերտները սովորեն տառերի թվային արժեքը: Յուրաքանչյուր տառ ունի իր թիվը:

Ա-այբ-1	Ժ—ժե-10	Ճ-ճե-100	Ռ-ռա-1000
Բ-բեն-2	Ի-ինի-20	Մ-մեն-200	Ս-սե -2000
Գ-գիմ-3	Լ-լյուն-30	Յ-հի-300	Վ-վեվ-3000
Դ-դա-4	Խ-խե 40	Ն-նու 400	Տ-տյուն-4000
Ե-եչ-5	Ծ-ծա-50	Շ-շա-500	Ր-րե-5000
Զ-զա-6	Կ-կեն-60	Ո-ո-600	Ց-ցո-6000
Է-է-7	Հ-հո-70	Չ-չա-700	Ւ-վյուն-7000
Ը-ըթ-8	Ղ-ձա-80	Պ-պե-800	Փ-փյուր-8000

Թ-թո-9 Ղ-ղատ-90 Ջ-ջե-900 Ք-քե-9000

Այս դասի ժամանակ արժևորվեց հայ գրերի գյուտը, գնահատվեց Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի դերը հայ ժողովրդի կյանքում:Ստեղծելով միջառարկայական կապեր ՝ կարողացա աշակերտների մոտ ձևավորել և ամրապնդել գիտելիքներ ոչ միայն գրերի ստեղծման մասին,այլև կատարեցինք շատ քննարկումներ:Աշակերտները ընկալեցին նաև ժամանակ և տարածություն խաչվող հասկացությունը, որտեղ կարևորվում են որտեղ և ե՞րբ հարցերը: Բացահայտեցինք,թե սովորողները որքանով են ծանոթ հայոց պատմությանը, ինչ գիտեն և ինչ են հիշում՝ շեշտելով սեփական պատմությունը, լավ սովորելու և իմանալու կարևորությունը:

Մայրենիի միասնացված յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի գիտելիքի ինտեգրման բազմաթիվ դրվագներ: Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ: Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել: Մայրենիի միասնացված դասընթացի միջոցով խնդիր է դրվում ապահովելու հայոց լեզվի ուսուցման՝ առարկայական չափորոշչով սահմանված նպատակներից մեկը, այն է՝ «սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու մշակումը, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների զարգացումը»

Եզրակացություն

Միջառարկայական կապերը և ինտեգված դասերը այսօրվա մեր դասի,ուսուցման գործընթացի կարևոր,անբաժան մասերն են:Անհնար է իրականացնել հաջողված դաս առանց միջառարկայական կապերի:Թեև միջառարկայական կապերը ավելի վաղ շրջանից էին ներառված ուսումնական գործընթացում,սակայն այն ավելի շատ ժամանակաշրջանի,մեր այժմյան չափորոշիչների պահանջներից է բխում:Ուսումնասիրելով և հետազոտելով միջառարկայական կապերը և դրանք կիրառելով իմ դասընթացին՝ հանգեցի այն համոզմանը,որ գիտելիքների ամրապնդման արդյունավետությունը ավելի մեծ է,աշակերտները ստացած նյութը ավելի լավ են հիշում:Կարողանում են շղթայի նման դեպքերը,իրադարձությունները միմյանց կապելով ավելի լավ հիշել ու պատկերացնել: Միջառարկայական կապերի իրագործումը հնարավորություն ստեղծեց խնայելու ժամանակը, աշակերտների համար ստեղծվեցին նպաստավոր պայմաններ: Անգամ թույլ սովորող աշակերտները ոգևորությամբ մասնակցեցին բոլոր աշխատանքներին ու ունեցանք նկատելի հաջողություններ:Պարզ դարձավ, որ ուսուցման գործընթացում միջառարկայական կապերին կարևոր տեղ հատկացնելը ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են և դրա պահպանումը ժամանակակից դպրոցում ժամանակի հրամայականն է և ուսուցիչների ու աշակերտների հաջող ուսուցման գրավականը: Ուսուցումը ,լինելով կենդանի գործողություն, անընդհատ աճում է, թարմանում, վերազինվում, հագենում նորանոր գաղափարներով ու մեթոդներով և հենց ուսուցման այս կարողություններն են, որ թույլ են տալիս հետաքրքրությունն ապահովել յուրաքանչյուր սերնդի համար՝ կախված տվյալ ժամանակաշրջանի պահանջներից, իսկ միջառարկայական կապերով անցկացված դասն ապահովում է գրեթե բոլոր սովորողների մասնակցությունը դասին, նրանց մտքի արագ աճին, տրամաբանության զարգացմանը , իրենց ունեցած գիտելիքների օգտագործմանը և շատ այլ հմտությունների ,որոնք կարող են կիրառվել դասի ընթացքում:

Գրականություն

1.Մկրտչյան Գ., Միասնացված կրթության անհրաժեշտությունը տարրական և միջին դպրոցներում, Նախաշավիղ 7-8, Երևան, 2009:

2. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները (ձեռնարկ ուսուցիչների համար), Ե.- 2004., էջ 42

3. Иванов, В.Г. Междисциплинарные связи в образовательном процессе / В.Г. Иванов, Т.А. Иванова // Среднее профессиональное образование. – 2000. - № 12. – С. 44 – 46

4. Աշոտ Գալստյան, Թամարա Թովմասյան « Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք», Երևան-2023

5. https://krtahartak.am/courses/obligatory/course-014/lessons/%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%BA%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%AB%D6%80%D5%A1%D5%BC%D5%B4%D5%A1%D5%B4%D5%A2-%D5%AB%D5%B6%D5%BF/